Հաղթանակած գործ

Խնդիրը կայանում էր նրանում, որ Երևանի քաղաքապետարանը անտեսելով Նելլի Հայրիյանցի իրավունքները, ուղղակի վաճառքի միջոցով Նելլի Հայրիյանցի հարևանին էր օտարել Նելլի Հայրիյանցի բնակարանի մուտքի առջի հողամասը, որով վերջինս մուտք էր գործում իր բնակարան՝ առանց վերջինիս իրավունքները հաշվի առնելու, վարչական վարույթի մասին ծանուցելու և անտեսելով այն հանգամանքը, որ Նելլի Հայրիյանցը այլ տեղով չի կարող մուտք գործել իր բնակարան: Երևանի Քաղաքապետի որոշման հիման վրաՆելլի Հայրիյանցի հարևանի իրավունքները ստացել էին պետական գրանցում ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումում: Արդյունքում Նելլի Հայրիյանցը զրկվել էր սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակարան մուտք գործելու հնարավորությունից: Նելլի Հայրիյանցի իրավունքների պաշտպանությունն արդյունավետորեն իրականացնելու և դատական ներկայացուցչության համար որպես ներկայացուցիչ ներգրավվել էր փաստաբան Կարեն Հովհաննիսյանը: ՀՀ վարչական դատարանը (նախագահող դատավոր Արգիշտի Ղազարյան) քննելով հիշյալ **վարչական գործը 2012թ. մայիսի 14-ի թիվ ՎԴ-2303/05/10** վարչական գործով մերժել էր Նելլի Հայրիյանցի հայցը անհիմն կերպով պատճառաբանելով, որ Նելլի Հայրիյանցը չի ունեցել սեփականության իրավունք իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակարանի նկատմամբ: **Հիշյալ որոշումը բողոքարկվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.10.2012թ. որոշմամբ ստորադաս դատարանի վճիռը բեկանվել է փոփոխվել է՝ մասնակի անվավեր է ճանաչվել Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումները և վերականգնվել է Նելլի Հայրիյանցի իրավունքները: Որոշումը ստացել է օրինական ուժ և ավելի քան 10 տարի տևած դատական գործը հանգուցալուծվել է:**